ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/10

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Գրանտշին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Հարությունյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 62.110.978613)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6503-19 գրությամբ «Գրանտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 19.03.2019թ. թիվ 190 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6503-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գրանտշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գրանտշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գրանտշին» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Գրանտշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/10 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 12:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով ներկայացնելու գրավոր դիրքորոշում և տեղեկանք՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված:

3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.036.2019թ. թիվ 190 գրությամբ հայտնել է, որ Հայստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2019 թվականի թետրվարի 25-ին հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով ընթացակարգի հրավերը, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2019 թվականի մարտի 6-ին:

2019 թվականի մարտի 13-ին ստացվել է ՊԵԿ եզրակացությունը, որի համաձայն՝ «Գրանտշին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող: Նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 0 ՀՀ դրամ:

Պատվիրատուն հայտնել է, որ նույն օրը հանձնաժողովի քարտուղարի կողմից ծանուցում է ուղարկվել անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն շտկում չի ներկայացվել:

Պատվիրատուն հայտնել է, որ «Գրանտշին» ՍՊԸ-ի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի ընթացքում ի հայտ են եկել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով նախատեսված հիմքերը և «Գրանտշին» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/10 ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 12:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 03.03.2019թ. հայտ է ներկայացրել «Գրանտշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով, առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Գրանտշին» ՍՊԸ-ին:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 13.03.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գրանտշին» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերությանը ծանուցվել է շտկելու անհամապատասխանությունը, սակայն վերջինիս կողմից շտկում չի իրականացվել, որի հիման վրա «Գրանտշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6503-19 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 19.036.2019թ. թիվ 190 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: ***«Ֆինանսական միջոցներ» որակավորման***

չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

48. ***Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ ***«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝***

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝***

ա. ***երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,***

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***03.03.2019թ.*** հայտ է ներկայացրել «Գրանտշին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր արժեքը 1-ին չափաբաժնի մասով կազմել է ***15 960 000 ՀՀ դրամ***, 4-րդ չափաբաժնի մասով՝ ***22 950 000 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով, առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Գրանտշին» ՍՊԸ-ին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 13.03.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գրանտշին» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը <u>0 ՀՀ դրամ է</u>:***

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը 13.03.2019թ. ծանուցվել է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերությանը ծանուցվել է շտկելու անհամապատասխանությունը, սակայն վերջինիս կողմից շտկում չի իրականացվել:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գրանտշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ 4-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ ***հրավերով նախատեսված*** գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) ***որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը***

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, մինչդեռ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին փվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի գտնում եմ, որ «Գրանտշին» ՍՊԸ-ն «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/34/35/36/37/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է Ընկերության՝ Ընթացակարգին մասնակցության հետագա դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6503-19 գրությամբ «Գրանտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գրանտշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ